ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

25.05.2017թ.
N_104_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՝ մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի համայնքապետարանի 28.04.2017թ-ի ավագանու 4-րդ նիստի թիվ N10, 11,12,13,14 որոշումներ:

Առդիր 6 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

28.04.2017թ.

ՆԻՍ N 4

Տեղի ունեցավ Խաչաղբյու գյուղական համայնքի ավագանու հերթական 4-րդ նիստը:
Նիսը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:
Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամները:
Նիստին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:
Նիսի օրակարգը բաղկացած էր 5 հարցից:

1. Համայնքի խոտհարքներին ու ցանքատարածություններին հանդապահ նշանակելու մասին:
   Զեկուցող՝ Ս.Գալստյան:
2. Համայնքի նախակրթարանին գումար հատկացնելու մասին:
   Զեկուցող՝ Ս.Գալստյան:
3. Համայնքի ֆուտբոլային թիմին մրցույթներին մասնակցելու համար ֆինասական օժանդակություն ցուցաբերելու մասին :
   Զեկուցող՝ Ս.Գալստյան:
4. Համայնքի միջնակարգ դպրոցի շրջանավարտների վերջին դասի կազմակերպման և հուշալբոմներ ձեռք բերելու համար ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու մասին :
   Զեկուցող՝ Ս.Գալստյան:
5. Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման մասին:
   Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Չեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան
- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՁԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 10

Լսեցին- 1. Համայնքի խոտհարքներն ու ցանքատարածություններին հանդապահ նշանակելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ Խաչաղբյուր համայնքապետարանի խոտհարքներն ու հացահատիկի ցանքատարածությունները գտնվում են հարևան համայնքներին հարող սահմանային մասերում, որոնք մշտապես արածեցվում են տվյալ համայնքների անասունների կողմից: Խնդիրը բարդանում է համայնքի անբարեխիղճ անասնապահների պատճառով, որոնք առավել ուշադիր չեն հանրային դաշտերի ու ցանքատարածությունների պահպանությանը ու անասուններին մեծամասամբ դաշտ են թողնում առանց հսկողության:

Զեկուցողը առաջարկեց մինչև հունձը նշանակել հանդապահ:

Ներկայացված հարցի վերաբերյալ իր կարծիքը հայտնեց նաև գ/պ աշխատակազմի քարտուղար Ն. Զաքարյանը՝ հավելելով, որ հանդապահ նշանակելու խնդրանքով համայնքապետարան են դիմում նաև համայնքի շատ բնակիչներ:

Հանդապապահի ծառայություն ձեռք բերելու նպատակով առաջարկվում է թույլատրել պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 620000 (վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ տեղափոխել 4239 հոդվածին:
Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Հանդապապահի ծառայություն ձեռք բերելու նպատակով թույլատրել պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 620000 (վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ տեղափոխել 4239 հոդվածին:

Համաձայնություն տալ մինչև բերքահավաքի ավարտը Խաչաղբյուրի Ճալա կոչվող տարածքին հանդապահ նշանակել Եղիազարյան Հայկազին՝ աշխատավարձը սահմանել նվազագույն աշխատավարձի չափով:
Սարատեղ կոչվող տարածքի հանդապահ նշանակել Ավետիք Եղիազարյանին՝աշխատավարձը սահմանել 80000(ութսուն հազար) ՀՀ դրամ:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Ձեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան

- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 11

Լսեցին- 2. Համայնքի նախակրթարանին գումար հատկացնելու մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Զեկուցող ներկայացրեց , որ համայնքում գործող նախակրթարանին անհրաժեշտ է համայնքի բյուջեից հատկացնել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումար նախակրթարանը մաքուր պահելու և սանհանգույցը վերանորոգելու համար:

Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից 50000 (հիսուն հազար)ՀՀ դրամ հատկացնել համայնքում գործող նախակրթարանը մաքուր պահելու և սանհանգույցը վերանորոգելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Չեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան
- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 12

Լսեցին-3. Համայնքի ֆուտբոլային թիմին մրցույթներին մասնակցելու համար ֆինասական օժանդակություն ցուցաբերելու մասին :

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Զեկուցողը փաստեց, որ համայնքում առկա է երիտասարդների մի սերունդ , որոնք ակտիվ հետաքրքրություն ունեն տարբեր մարզաձևերի `մասնավորապես ֆուտբոլի ու շախմատի նկատմամբ: Համայնքի ֆուտբոլային թիմը իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում հաճախակի կազմակերպվող տարածաշրջանային խաղերին:

Ավագանու անդամ Ա. Գաբոյանը կարծիք հայտնեց, որ ինչպես երիտասարդության, այնպես էլ համայնքի համար ֆուտբոլի թիմին աջակցություն ցուցաբերելն ու մրցումներին մասնակցելը մեծ կարևորություն ունի:

Ամփոփելով հարցի քննարկումը, համայնքի ղեկավարը ավագանուն առաջարկեց համաձայնություն տալ համայնքի բյուջեից 40000 (քառասուն հազար)ՀՀ դրամ հատկացնել մրցումներին մասնակցելու համար:

Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից 40000 (քառասուն հազար)ՀՀ դրամ հատկացնել համայնքի ֆուտբոլային թիմին՝ մրցումներին մասնակցելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Չեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան
- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 13

Լսեցին- 4.Համայնքի միջնակարգ դպրոցի շրջանավարտների վերջին դասի կազմակերպման և հուշալբոմներ ձեռք բերելու համար ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու մասին :

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Ներկայացվեց, որ համայնքապետարան են դիմել 2016-2017 թթ-ի շրջանավարտներ վերջին դասի կազմակերպման և հուշալբոմներ ձեռք բերելու համար ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համար:

Ելնելով շրջանավարտների ընտանիքների սոցիալական ոչ բավարար պայմաններից, ինչը նշված է ներկայացված դիմումում և հաշվի առնելով համայնքապետարանի արդեն ավանդույթ դարձած ավանդույթը՝ շրջանավարտներին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու մասով, առաջարկվում է դպրոցի 15 շրջանավարտների վերջին դասի կազմակերպման և հուշալբոմների ձեռք բերելու համար հատկացնել 105000 (հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

Ավագանին քննարկելով հարցը դրական կարծիք հայտնեց ներկայացված հարցի վերաբերյալ և՝ որշեց

Համաձայնություն տալ՝ համայնքի միջնակարգ դպրոցի շրջանավարտների վերջին դասի կազմակերպման և հուշալբոմներ ձեռք բերելու համար համայնքի բյուջեից հատկացնել 105000 (հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Չեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան
- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 14

Լսեցին-5. Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման մասին:

Զեկուցող՝ Ս.Գալստյան:

Զեկուցողը ներկայացրեց , որ սույն թվականի մայիսին կազմակերպվելու է համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ, որի համար անհրաժեշտ է համայնքի բյուջեից որոշակի գումար հատկացնել:

Համայնքի տարացքում կուտակված աղբի մաքրման և տեղափոխման համար պայմանագիր է կապվել համապատասխան տրանսպորտային միջոց ունեցող անձի հետ, որի համար անհրաժեշտ է հատկացնել 40000(քառասուն հազար) ՀՀ դրամ:

Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից 40000 (քառասուն հազար)ՀՀ դրամ հատկացնել կուտակված աղբի մաքրման և տեղափոխման համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Ձեռնպահ:

- Վ.Խաչատրյան
- Տ.Գաբոյան
- Ա.Գաբոյան
- Գ.Խաչատրյան
- Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան